№ 158 ՇԱԲԱԹ ՅՈՒԼԻՍԻ 21 1901 ՇԱԲԱԹ ՅՈՒԼԻՍԻ 21 № 158

ՔՍԱՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվան 6 բուբ.
Առանձին համարները 5 կոպէկ.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի եւ ազգ օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻՉ՝ ԱՐՇԱՐՈՒՆԻ

Կիրակի, յուլիսի 22-ին,
մարդասէր-օրբախնամ եւ ճշմարիտ հրապարակախօս

ԳՐԻԳՈՐ ԶԱՆՇԵԱՆԻ

մահվան տարեդարձի առիթով, Կուկիայի Թանդոյեան ս. Աստուածածին եկեղեցում կը մատուցվի պատարագ եւ հոգեհանդիստ։ Այս մասին նոյն եկեղեցու միաբան քահանաները եւ երէցփոխը յայտնում են հանգուցեալի յիշատակը յարգող հոգեւորականներին եւ աշխարհականներին։ Պատարագի սկիզբն է առաւօտեան 11 ժամին։ 1—2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ժողովրդի շահերը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արձագանքներ. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Գերմանիայից. Արտաքին լուրեր. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Հ. Լինչի գործը։

ԺՈՂՈՎՐԴԻ ՇԱՀԵՐԸ

—

Մենք ցանկանում ենք, որ Անդրկովկասը հանդէս բերէ իր բոլոր հարստութիւնները, որ նա շահագործելով իր հանքերը՝ վաճառանոց հանէ իր ծոցում թաղված մետաղները եւ թանկագին բաղադրութիւնները, որ նա արտադրէ հարաւին եւ լեռներին յատուկ բոլոր գիւղատնտեսական արմտիքները։ Այո, մենք ցանկանում ենք, որ բնութեան տուած առատ գանձերը եւ լեռան գան եւ մեր երկիրը իրան արժանի տեղը բռնէ ուրիշ երկիրների շարքում։ Սակայն երկրի իսկական երջանկութեան գլխաւոր պայմաններից մէկն այն է, որ նրա գանձերը եւ արդիւնաբերութիւնները գտնվեն նրա ժողովրդական մասսայի ձեռքին՝ նրա ամբողջ աղգաբնակութեան տրամադրութեան տակ։

Վերջին տարիներում մենք տեսնում ենք բազմաթիւ փորձեր շահագործելու մեր երկրի հարստութիւնները, բայց մենք չենք նկատում ոչ մի ձգտում տալու այդ հարստութիւնները ժողովրդական մասսային։ Այն ընդհանուր տենդի մէջ, որ վարակել է բոլորին, մենք տեսնում ենք, թէ ինչպէս ժողովրդի անունով խօսողները եւ երդվողները, հէնց որ նշմարում են ոսկու ճաճանչներ, մոռանում են ամեն սրբութիւն եւ անձնատուր են լինում իրանց նեղ անձնական շահերի որոնումներին։

Ժողովրդական շահերի ջատագով ձեւացողները դաւաճանեցին ժողովրդին եւ նրանք այժմ պատրաստ են ամեն տեսակ հարցերի անունը լսել, բացի ժողովրդական մասսայի շահերի պաշտպանութեան հարցի անունից։ Ինչո՞ւ։ Մի՞թէ ժողովրդական մասսայի հարցերը բաւարար լուծում ստացան. մի՞թէ ժողովրդի խաւերում երեւացին յատուկ կազմակերպութիւններ եւ բազմաթիւ ուժեղ եւ ինքնուրոյն անձնաւորութիւններ, որոնք աւելորդ դարձրին մեր ինտելիգենցիայի գործունէութիւնը։ Ոչ, անկասկած ոչ։

Մեր ինտելիգենցիան բաղկացած է թոյլ, անձնապաշտ, մեղկ եւ թուլամորթ անհատներից, որոնց համար հասարակական շահը եւ կուլտուրական ընդհանուր առաջադիմութիւնը դեռ պահանջ չեն դարձած ամենեւին։ Մեր ինտելիգենտը գոհ է, երբ նրան աջողվում է փոքր ի շատէ վայելուչ կեանք ստեղծել անձնապէս իր համար եւ բուրժուազական ամենատարրական մոգաներին հետեւել։ Այն, ինչ որ կրում է աւելի բարձր բարոյական դրոշմ իր վրա, այն, ինչ որ կապված է իդէալական ձգտումների և հասարակական պարտաւորութիւնների գաղափարի հետ, այդ բոլորը դուրս է շպրտվում կեանքի առօրեայ ծրագրից, իբրև մի աւելորդ բան, իբրև պատանեկական անփորձ օրերի երազային բարբանջանքներ։

Սակայն մի մոռացէք, որ ժողովրդական մասսայի կեանքի մէջ մտնում են գիտակցութեան ճառագայթներ և նա սկսում է ճանաչել իր բարեկամներին և թշնամիներին։ Նա անպատիժ չի թողնի ձեր յանցաւոր անտարբերութիւնը և այն օրը, երբ դուք շլացած ձեր բուրժուազական վայելչութիւններով կերազէք, թէ հասել էք ձեր երկրային երջանկութեան, նա կը դրոշմէ ձեր ճակատին եսամոլների և ժողովրդի թշնամիների անուններ։ Իսկ այդ դատավճիռը շատ ծանր կը լինի այն ժամանակ, երբ ժողովրդական մասսան կը սկսէ ազդել հասարակական կարծիքի վրա։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ

LIV

Մեր ազգային կեանքը վերջին տարիներս կարծէք զանազան անեկդոտների իրականացումը լինի։

Դիմում էք էջմիածին, խնդրում էք կամ բողոքում էք։—«Ձեր խնդիրքը հիմնաւոր է, ձեր պահանջը արդար է»,—ասում են ձեզ։

Ձեզնից անմիջապէս յետոյ դիմում են այնտեղ ուրիշները, խնդրելով ձեր խնդրածի հակառակը։—«Ձեր պահանջը անկասկած արդար է»,—լինում է պատասխանը։

Այդպէս չէ կարելի,—նկատում էք լրագրում։—Այն մարդիկ, որոնց ձեռքին է ազգային գործերի ղեկավարութիւնը, պէտք է ունենան մի ղբբլա, մի աղօթարան, նրանց այն պէտք է այո լինի եւ ոչը՝ ոչ։

Ձեր ասածն էլ ճշմարիտ է,—պատասխանում են մոլլա Նասր-Էդդինի նման, մոռանալով, որ անեկդոտիստ մոլլայի վճիռները ոչ ոքի համար պարտադիր չէին, մինչդեռ էջմիածնից արձակված վճիռների շնորհիւ մարդիկ անբաղդանում են եւ ամբողջ հիմնարկութիւններ վտանգվում են։

Այո, մարդիկ անբաղդանում են եւ հիմնարկութիւնները վտանգվում, իսկ մենք անեկդոտներով ենք զբաղված եւ կարծում ենք, թէ բաւական է «վայ, վայ Երուսաղէմ» աղաղակողների բերանը փակել, որպէս զի Երուսաղէմը կանգուն մնայ, ի հաճոյս եւ ի վայելումն փարիսեցիների եւ մաքսաւորների։

Վերցրէք, օրինակ, մեր տակաւաթիւ հիմնարկութիւններից մէկը, Երեւանի թեմական դպրոցը, որի մասին մի թղթակցութիւն տրպվեց Երեւանից «Մշակի» երէկվայ համարում։

Կարդացէք այդ թղթակցութիւնը, եթէ չէք կարդացել։ Արժէ։

Ուսումնական տարին վերջանում է։ Տեսուչը զեկուցանում է, որ այս ինչ եւ այս ինչ ուսուցիչները չը պէտք է հրաւիրվեն եկող տարվայ համար, որովհետեւ չեն համապատասխանում իրանց պաշտօնին։ Հոգաբարձական ժողովը, որի իրաւունքն է հրաւիրել եւ արձակել ուսուցիչներ եւ որի անդամները ժողովրդի ներկայացուցիչներն են, իսկ նախագահը՝ Կաթողիկոսի,—հաւանութիւն է տալիս տեսչի կարծիքին։ Միաձայն վճռվում է չը հրաւիրել միւս տարվայ համար այդ ուսուցիչներին, եւ տեսուչը հեռանում է Երեւանից։

Ամեն ուրիշ տեղ դրանով էլ կը վերջանար պատմութիւնը, բայց մեզանում այդպէս չէ, որովհետեւ փորձը մեզ ցոյց է տուել, որ մեզնում չը կայ ոչ անխախտելի վճիռ, ոչ էլ տրված խոստման սրբութիւն։ Եւ ահա սկսվում է ուխտագնացութիւն էջմիածին, ու ստացվում է մոլլա Նասր-Էդդինի յայտնի պատասխանը։ Որպէս զի այդ պատասխանի հակառակ պատասխանը ստացվի, պէտք է հակառակ կողմն էլ նոյնպիսի ուխտագնացութիւն կատարի, եւ յաղթանակը անշուշտ կը տանի նա, ով ամենից շատ այդպիսի ճանապարհորդութիւններ կը կատարի։

Աւելորդ է ասել, թէ ինչ վտանգաւոր անիշխանութիւն է ստացվում, երբ ոչ ոք հաւատացած չէ, թէ մի օրինաւոր վճիռ չի խախտվի հէնց հետեւեալ օրը։

Սակայն այս դէպքում խօսքը ոչ միայն օրինաւոր, այլ եւ վերին աստիճանի անհրաժեշտ վճռի մասին է։

Մենք կուսակից ենք այն սկզբունքի, որ ուսուցիչները որքան կարելի է հաստատ լինեն իրանց պաշտօնում եւ շուտ-շուտ չը փոխվում է տպագրական երեսի ամբողջ ծաւալը, իսկ ոմանք՝ կրկնակի եւ աւելի խոշորութիւն ունենալով՝ ծալված են քարտէզի պէս։ Միւս 97 պատկերներից ոմանք կէս—երեսի մեծութեամբ են եւ ոմանք առաւել կամ պակաս։ Այս բոլոր պատկերները եւ քարտէզները հանած ու աշխատասիրած է Լինչը անձամբ իրան ընկերացող մասնագէտների հետ։ Երկու հատորները, պատկերներով միասին, կազմում են 1180 երես։

Առաջին հատորը, որ բաղկանում է, պատկերով միասին, 574 երեսներից՝ ամբողջապէս նուիրված է ռուսական-Հայաստանին։ Թուրքիկ գաղափար տալու համար այդ 574 երեսների պարունակութեան մասին՝ էական միջոցն է առաջ բերել իր 22 գլուխների վերտառութիւնները հետեւեալ կարգով.

I. Ծովեզրը եւ Նաւահանգիստը.
II. Դարն ի վեր դէպի Հայաստան.
III. Դէպի Ախալցխա.
IV. Դէպի Ախալքալաք.
V. Ախալքալաքում.
VI. Տեսարանը Աբուլից.
VII. Գօրելօվկա եւ Լուկերիա թագուհին.
VIII. Դէպի Ալէքսանդրոպոլ.
IX. Ալէքսանդրոպոլ.
X. Դէպի Երեւան.
XI. Դէպի Արարատ.
XII. Վերելք Արարատի.
XIII. Արարատի սիրտը.
XIV. Վերադարձ դէպի Երեւան.
XV. Երեւանում.
XVI. Էջմիածին եւ Հայկական եկեղեցին.
XVII. Դէպի Անի եւ Կարս.
XVIII. Անի եւ հայոց թագաւորութիւնը միջին դարում.
XIX. Կարս.
XX. Հայաստանի ծուծի մի ծայրից միւսը.
XXI. Աշխարհագրական.
XXII. Վիճակագրական եւ քաղաքական.

Այս 22 գլուխների նիւթը լցնում է գրքի 470 երեսները, առանց հաշուելու մեծ պատկերները, որոնք առանձնապէս 104 երես են գրավում։ Ինչպէս վերեւում յիշեցի, մեծ պատկերները տպված են մասնաւոր թղթերի վրա եւ տեսարանները արտափայլում են իրանց բնական երանգներովն ու կցված են գրքի մէջ իւրաքանչիւրը իրանց համապատասխան տեղերում։

1) Առաջին պատկերը, 10 վերչոկ երկայնութեամբ, ներկայացնում է մեծ ու փոքր Արարատը Արալըխից հանված՝ դաշտային կանաչորակ եւ լեռնային կապոյտ ու ձիւնափայլ գոյներով ու բաց-կապոյտ խոր հորիզոնով։ Յետոյ գալիս են.

2) Տրապիզոն, Արեւմտեան հեղեղատի գլխից հանված.
3) Տրապիզոն. Հաջի Սօֆիա
4) » Հաջի Սօֆիայի հարաւային ճակատը.
5) Ռիօնի դաշտը՝ Կովկասի հարաւակողմի դարիվայրից քաշված, Քութայիսը առջեւի մասում.
6) Հիւսիսի տեսարանը Զիկարի կիրճից
7) Հարաւի տեսարանը Զիկարի կիրճից
8) Սաֆար. Ս. Սաման արեւմուտքից
9) Սաֆար. Ս. Սամայի սիւնազարդ սրահը
10) Ախալցխան Ախալքալաքի ճանապարհից.
11) Խերդվիսի ամրոցը
12) Վարձիա. Այրաբնակ քաղաքը

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Հ. ԼԻՆՉԻ ԳՈՐԾԸ

—

«Armenia», ճանապարհորդութիւններ եւ ուսումնասիրութիւններ *)

1

Մի քանի շաբաթ առաջ համառօտաբար ներկայացրի այս մեծ գործը «Մշակի» ընթերցողներին։ Այս անգամ առաջ եմ բերում աւելի այնպիսի կէտեր, որոնք կարող են քիչ շատ չչափելի հասկացողութիւն կազմել տալ այս գրքի մասին։

Պ. Լինչ առաջաբանի մէջ հարեւանցի կերպով խօսում է իր ճանապարհորդութեան շարժառիթների մասին, նաեւ այն դժուարութիւնների վերաբերմամբ, որոնց հանդիպում է ճանապարհորդը աշխարհագրական պարզ գործիքների իսկ բացակայութեան պատճառով, իսկ Հայաստանի բուն ուսումնասիրութեան նկատմամբ ասում է. «Երկիրը եւ ժողովուրդը, որ կազմում են հետեւեալ էջերի նիւթը, արժանի են մէկը սքանչացման եւ միւսը ամենաբարձր հետաքրքրութեան։ Շատ տարօրինակ է, որ այդ տեսակ մի գեղեցիկ երկիր այսքան երկար դարեր մնացել է ստուերի տակ եւ որ նոյն իսկ յոյն ու լատին գրողների բնագիր գործերը այնքան քիչ տեղեկութիւն են պարզում նրա նկարագրի ու հանգամանքի վերաբերմամբ։ Վերջացած դարի ընթացքում շատ բան է արվել վտարելու այդ խաւարը, եւ ես բաւական նեղութիւն քաշեցի հաւաքելու ու համադասելու նախորդների գործը»։

Պ. Լինչի քաշած այս նեղութիւնը չեմ կարծում, որ նիւթապէս կարող է վարձատրվել մեր ժողովրդից այլ եւ այլ պատճառներով, սակայն նա արժանի է կատարելապէս բարոյական մեծ վարձատրութեան—մեր երկրատեւ հանրային համակրանքին, որովհետեւ իր նեղութեան պտուղը «Գլուխ գործոց» է մինչեւ այսօր լոյս տեսած հայերէն եւ եւրոպական աշխատութիւնների մէջ։ Մի հայ, որ անգլիերէն չը գիտէ, պիտի հիանայ ու պարծանք զգայ հարիւրաւոր աքանչելի, տեղ-տեղ գունաւոր պատկերներովը, որ սփռված են գրքի մի ծայրից մինչը, իսկ անգլիագէտ հայը պիտի վայելէ աւելի մեծ հաճոյք այն պարզ ու կորովի ոճի մէջ, ուր մեր երկիրը ու ժողովուրդը պատկերացված են այնքան կենդանի գոյներով ու նրկարագրական մանրամասնութեամբ։

Երկու հատորները միասին պարունակում են 197 փորագիր պատկերներ եւ 16 հատ քարտէզներ ու պլաններ։ Պատկերներից 99 հատը հանված են յատուկ եւ աւելի հատ թղթերի վրա, եւեւը անտիպ, սրանք ամենքը խոշոր են, մասամբ գունաւոր եւ հիանալի նրբութեամբ դուրս բերված. իւրաքանչիւր պատկեր գրավում է տպագրական երեսի ամբողջ ծաւալը, իսկ ոմանք՝ կրկնակի եւ աւելի խոշորութիւն ունենալով՝ ծալված են քարտէզի պէս։ Միւս 97 պատկերներից ոմանք կէս—երեսի մեծութեամբ են եւ ոմանք առաւել կամ պակաս։ Այս բոլոր պատկերները եւ քարտէզները հանած ու աշխատասիրած է Լինչը անձամբ իրան ընկերացող մասնագէտների հետ։ Երկու հատորները, պատկերներով միասին, կազմում են 1180 երես։

Առաջին հատորը, որ բաղկանում է, պատկերով միասին, 574 երեսներից՝ ամբողջապէս նուիրված է ռուսական-Հայաստանին։ Թուրքիկ գաղափար տալու համար այդ 574 երեսների պարունակութեան մասին՝ էական միջոցն է առաջ բերել իր 22 գլուխների վերտառութիւնները հետեւեալ կարգով.

I. Ծովեզրը եւ Նաւահանգիստը.
II. Դարն ի վեր դէպի Հայաստան.
III. Դէպի Ախալցխա.
IV. Դէպի Ախալքալաք.
V. Ախալքալաքում.
VI. Տեսարանը Աբուլից.
VII. Գօրելօվկա եւ Լուկերիա թագուհին.
VIII. Դէպի Ալէքսանդրոպոլ.
IX. Ալէքսանդրոպոլ.
X. Դէպի Երեւան.
XI. Դէպի Արարատ.
XII. Վերելք Արարատի.
XIII. Արարատի սիրտը.
XIV. Վերադարձ դէպի Երեւան.
XV. Երեւանում.
XVI. Էջմիածին եւ Հայկական եկեղեցին.
XVII. Դէպի Անի եւ Կարս.
XVIII. Անի եւ հայոց թագաւորութիւնը մի-

) Գինը 21 բուբլի, իսկ ճանապարհի ծախսով մօտ 23 բուբլի և ծախվում է հրատարակչի մօտ. Messrs Longmans, Green & C°. 39 Paternoster Row London E. C. իսկ փափագողները, դիւրութեան կամ անկորուստ ապահովութեան համար, կարող են գրել ինձ՝ 117 Godolphin koad, London W. Այս պարագային դիմողի կամաց համեմատ գիրքը կարելի է ապահովագրել (застраховать) դնելով, երկու պարագային ևս, թիթեղէ կամ տախտակէ արկղի մէջ. այս կերպով անկորուստ ղրկված երկհատոր օրինակը կարժենայ 24 բուբլի. երկու հատորի ծանրութիւնն է մօտ 9 անգլիական ֆունտ։

վեն, բայց այդ սկզբունքը լաւ է միայն այն դէպքում, երբ ուսուցիչները հրաւիրվել են օրինաւոր կերպով, երբ նրանց հրաւիրելիս ի նկատի են ունեցել նրանց կրթութեան չափը, նրանց ընդունակութիւնները։ Իսկ ում յայտնի չէ, որ մեր դպրոցները, շատերի կարծիքով, անկելանոց են, որոնք կարող են վերջին ապաստան լինել ուրիշ որ եւ է բանի համար անընդունակ անձերին։ Ո՞ւմ յայտնի չէ, որ ուսուցիչ հրաւիրելիս մեզնում մեծ դեր է խաղում խնամիութիւնը, իսկ նրանց մէջ դասեր բաժանելիս՝ քահանայքը։

Այդ սիստեմի շնորհիւ միայն կարող էր պատահել, որ Երեւանի թեմական դպրոցի բարձր դասարաններում մի ժամանակ ֆիզիկա էր դաս տալիս Ներսիսեան դպրոցում աւարտած մի պարոն, իսկ երրորդ դասարանում ուսուցիչ էր մի ուրիշը, որ աւարտել էր նոյն թեմական դպրոցում։

Երբ ես տեսուչ էի Երեւանի դպրոցում, բարձր դասարանների հայերէնի ուսուցիչը գրում էր «անակընկալ» փոխանակ «անակնկալ»-ի, պատրաստական դասարանների ռուսերէնի ուսուցիչը՝ «домашное животное» փոխանակ «домашнее животное», աշխարհագրութեան ուսուցիչը երրորդ դասարանում չէր կարողանում բացատրել դասը, որովհետեւ ինքն էլ, ակներեւաբար, չէր հասկանում դասագրքի մէջ գրածը։ Ինձնից առաջ, պատմութեան ուսուցիչներից մէկը, ի դէպ ասել Օդեսայի համալսարանաւարտ,—մաթեմատիկայի՝ նոյնպէս համալսարանաւարտ եւ, իմ համոզմունքով, անպայման ճշմարտախօս ուսուցչի վկայութեամբ,—«բարրիկադա» բառը թարգմանում էր «զօրք»։ Նա թոյլ տալիս էր, որ բարրիկադա գուցէ զօրք չէ, բայց պնդում էր, որ այդ, յամենայն դէպս, շնչաւոր առարկայ է, որովհետեւ գրքում գրված է, թէ «բարրիկադներ երեւացին փողոցներում»։ Վերջապէս, իմ ժամանակ եւ ինձնից առաջ այնտեղ կար մի ուսուցիչ, որ ոչինչ չէր սովորեցնում աշակերտներին, որովհետեւ կարգ չէր կարողանում պահպանել դասարանում, մի ուսուցիչ, որի դասի ժամանակ աշակերտները զբաղվում էին նրա գրպանները զանազան բաներ գցելով եւ որին, ամեն անգամ դասարան մտնելիս, աշակերտները հանդիպում էին «հուշ» աղաղակով։

Ոչ մի ուրիշ ուսուցչի հետ այդ նոյն աշակերտները այդպէս չէին վարվում, այնպէս որ պարզ էր, որ այդտեղ մեղքը ուսուցչինն էր, որ եւ անընդունակ էր կարգ պահպանել, եւ ծուլանում էր աշակերտներին նկատողութիւն անել, թէեւ մի անգամ մէկի գլխին այնպէս խփել էր, որ կպել էր պատին ու վիրաւորվել։

Ես տանում էի այդ ուսուցչին, իբրեւ անհրաժեշտ չարիք։ Ես գիտէի, որ ինձ չի աջողի մի տարում մաքրել ինձ յանձնված «աւգեան ախոռը»։ Ուստի ես հեռացրի առաջին տարին միայն նրանց, որոնք իմ կարծիքով, ամենաշնասակարներն էին դպրոցի շահերի համար։

Ես հանդիստ թողեցի առ ժամանակ այդ պարոնին, որովհետեւ հաւատացած էի, որ եթէ նրան էլ հէնց առաջին տարին մտցնէի հեռացվող ուսուցիչների ցանկը, գուցէ ինձ չաջողէր ոչ ոքի հեռացնել, որովհետեւ այդ պարոնը շատ զօրեղ կապեր ունէր Էջմիածնում։

Դա նոյն պարոնն է, որ այժմ այնքան մեծ դեր է խաղում այս նոր պատմութեան մէջ եւ որ Երեւանի թեմի այժմեան առաջնորդի, Սուքիաս արքեպիսկոպոսի եղբօր որդին է, Լիպէս գրել էր եւ Երեւանի թղթակիցը։

Հասկացէք այժմ, թէ «որտեղ է թաղված շունը»։

Եւ ահա, որպէս զի այդ պարոնը, որ, ի դէպ ասել, բոլորովին ապահովված է եւ տանտէր է ու դրամատէր, մնայ թեմական դպրոցում եւ շարունակի ստանալ իր ռոճիկը, ամեն միջոցներ գործ են դրվում, ամեն սկզբունքներ ոտնատակ են տրվում, խոստման սրբութիւնը խախտվում է, հոգաբարձութեան պատիւը հողի է հաւասարեցնվում։

Պատմութեան տեսակէտից աննշան երեւոյթ է, ի հարկէ, Երեւանի թեմական դպրոցի այդ դէպքը, բայց այդպիսի դէպքերի շարքերից է մեծ մասամբ կազմվում պատմութիւնը եւ ամենաչնչին դէպքի մէջ էլ արտայայտվում են պատմութիւնը ղեկավարող սկզբունքները, ինչպէս միեւնոյն արեւի փայլը արտացոլվում է եւ ովկիանոսի, եւ ամենաչնչին կաթիլի մէջ։

Այդ տեսակէտից, այդ դէպքը մի ժանրանկար է ամբողջ հայոց պատմութեան։

Հակասական սկզբունքներ, որոնցից ոչ մէկը չէ համնում փարթամ զարգացման, ոյժեր, որոնք մանրանում են փոխադարձ կուի մէջ՝ փոխանակ աւելի զօրանալու մաքառման մէջ, խորութեան եւ թափչքների բացակայութիւն, անընդհատ սողումն ճահիճների մէջ, ընաւորութիւնների պակասութիւն, անվերջ կոմպրոմիսներ, մեղկութիւն եւ թուլամորթութիւն, քսութիւն եւ դաւաճանութիւն, անընդունակութիւն ըմբռնելու պատմական վայրկեանի լրջութիւնը եւ ամենալաւ դէպքում մի Վասակ Վարդանի կողքին,—ահա մեր պատմութեան ամբողջ փիլիսոփայութիւնը։

Տ. Ե.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ հաղորդում են, որ մասուլի ներկայացուցիչների ժողովը իր վերջին նիստում, որ տեղի ունեցաւ հինգշաբթի, յուլիսի 19-ին, ծրագրեց մասուլի բաժնի մանրամասն կազմակերպութիւնը։ Այդ բաժինը կը դառնվի նկարչական բաժնին կից եւ կը պարունակէ իր մէջ ընթերցարան, որտեղ յաճախորդները կարող են կարդալ լրագիրներ, տեսնել մասուլի օրգանների նմուշներ, տպագրական գործի առարկաներ, լուսանկարչական պատկերներ եւ տեսարաններ։ Բաժնի կառավարիչն է Վ. Կօրգանով։

—

«Одес. Новости» լրագիրը հաղորդում է, թէ Կայսերական թատրոնների վարչութեան մէջ միտք է ծագել Օդէսայի քաղաքային թատրոնը դարձնել կառավարչական թատրոն եւ յանկացնել նրան այն բոլոր իրաւունքներն եւ արտօնութիւնները, որ ունեն կառավարչական թատրոնները։ Այս հարցի վերաբերմամբ այժմ կազմվում է մի շատ հետաքրքրական նախագիծ, որ յետոյ կը ներկայացվի կայսերական թատրոնների վարչութեան քննութեանը։ Բացի Օդէսայից, նախագծում հարց է բարձրացնվում կառավարչական թատրոն հիմնելու մասին նաեւ Թիֆլիսում, որտեղ կայ արքունի գանձարանից օժանդակութիւն ստացող թատրոն։ Այս նախագծի իրագործման դէպքում, կայսերական թատրոնների վարչութիւնը կը կազմէ թատրոնական խմբեր, թէ դրամատիկական եւ թէ օպերային, որոնք տարվայ մի մասի ընթացքում ներկայացումներ կը տան Օդէսայում, իսկ մնացած ժամանակը—Թիֆլիսում եւ Վարշավայում։

—

Աչքի առաջ ունենալով, որ մեր երկրի զանազան տեղերում ներկայումս տարածված են մեծ քանակութեամբ մկներ, հաղորդում ենք այն տեղեկութիւնները, որ զետեղված են մկներ կոտորելու մասին «Deutsche Landwirths. Presse» մասնագիտական թերթում։ Ստրիխնին թոյնով շաղախված ցորենի հատիկները ազդեցութիւն չեն անում. մկները դէն են գցում թունաւոր կեղեւը եւ յետոյ ուտում են միջուկը, որ ազատ է թոյնից։ Ֆոսֆորի դեղահատերը (ֆոսֆորի հետ հունցած խմորը) նշանակութիւն չունեն. մկները նրանց ուտում են անհաճութեամբ, չափազանց քաղցած դէպքերում։ Լէֆլէրի բացիները չեն ազդում. մկները ուտում են եւ մնում առողջ։ Աւելի աջող են ներգործում մկնդեղի մէջ եփ տուած հատիկները, որ պատրաստվում է այսպէս. ցորենի հատիկները մի ժամ շարունակ եփ են տալիս ջրի մէջ, որ պարունակում է 2% մկնդեղ. մկները ուտում են հաճութեամբ եւ շուտով սատկում։

—

Կայսերական զինուորական-բժշկական ակադեմիայի վարչութիւնը խնդիրներ է ստանում բէալական դպրոցներում իրանց ուսման դասընթացքն աւարտողներից, որոնք ցանկութիւն են յայտնում մտնել ակադեմիան։ «Новости» լրագրի ասելով, ակադեմիայի վարչութիւնը պատասխանում է բոլոր խնդրատուներին, թէ բէալիստների ընդունելութիւնը (լրացուցիչ քննութեամբ լատիներէնից) թոյլ է տուած, որպէս ժամանակաւոր միջոց, հինգ տարով միայն, սակայն ընդունելութիւնը կըսկսվի ոչ առաջիկայ ուսումնական տարվանից, այլ հետեւեալ 1902 թուականից։

—

Կարսի մեր թղթակիցը գրում է մեզ, որ իր հաղորդած լուրը Էրզրումի վալիի սպանութեան մասին («Մշակ» № 152), չը ստուգվեց։ Այդպիսի դէպք տեղի չէ ունեցել։

—

ՂՈՒԲԱՅԻՑ մեզ գրում են. «Յուլիսի 16-ին Բագուի նահանգապետ պ. Օդինցեվ եկաւ Ղուբա ամարանոց. նրա հետ են շատ պաշտօնեաներ եւ դիւանատունը։ Մեր քաղաքը հիմա լիքն է եկուորներով եւ կենդանացել է։ Երէկ, յուլիսի 17-ին, պ. նահանգապետին ներկայացան թէ քաղաքիս պաշտօնեաները եւ թէ բնակիչները։ Նա այստեղ կը մնայ մօտ ամիս ու կէս»։

—

ԿԻՍԼՈՎՈԴՍԿԻՑ մեզ գրում են. «Յուլիսի 15-ին, կիրակի օրը, այստեղ ժողովրդական տօն էր ի յիշատակ ռուսաց տաղանդաւոր բանաստեղծ Լերմօնտովի մահվան վաթսունամեակի։ Պեատիգորսկը եւ Կիսլովոդսկը, որտեղ բանաստեղծը շատ տարիներ ապրել է եւ գրել իր երկերի մեծ մասը, այդ օրը մեծ շարժման մէջ էին։ Տօնի գլխաւոր հանդէսը կատարվեց Պեատիգորսկում, սակայն Կիսլովոդսկում եւս բաւական լաւ անցաւ տօնը։ Առաւօտեան այստեղի աւագ քահանան, նախ քան պատարագը, եկեղեցում հանդիսաւոր հոգեհանգիստ կատարեց, որին ներկայ էին գեներալ Պիսարեվ, բազմաթիւ զինուորականներ, երկդասեան ուսումնարանի աշակերտները իրանց ուսուցիչներով եւ շատ ուրիշներ։ Հոգեհանգստի ժամանակ երգում էր տեղական փոքրիկ խումբը, ժամանակցութեամբ օպերային մի քանի յայտնի երգիչների։ Ամբողջ օրը ժողովրդական անտառոր հոսանք էր սկսվել դէպի «Լերմօնտովի ժայռը»։ Դա ժողովրդական զբօսանքի ամենագեղեցիկ տեղն է եւ գտնվում է Կիսլովոդսկից 2 վերստ հեռաւորութեան վրա, Այլխովկա գետակի ձախ ափին, մի շատ բանաստեղծական ձորի մէջ։ Այդ ժայռը հեռուից խիստ նման է արուեստական բարձր ամբոցի։ Այս տեղում, առանձնացած այդ ժայռի գագաթին, նա գրել է շատ բանաստեղծութիւններ։ Ուսանողներ, ուսուցիչներ, զինուորականներ խումբ-խումբ գնում էին կիրակի օրը դէպի այդ ժայռը գրականական հանդէս կատարելու։ Այդտեղ էին գնացել նոյնպէս եւ մանկական պարտէզի երեխաները իրանց դաստիարակներով։ Երկաթուղային կուրզալը չքեղ զարդարված էր։ Բազմաթիւ գոյնզգոյն դրօշակների վրա խոշոր տառերով գրված էին. Воздушный корабль, Три пальмы, Молитва, Мцыри, Демонъ, Два великана եւ ուրիշ շատ գրուածքների անուններ։ Տեղ-տեղ դրված էին ահագին մեծութեան թղթի վրա նկարված քնարներ եւ փետրեայ գրիչ։ Ծաղկեայ փնջերի եւ շղթաների մէջ կանգնեցրել էին «Դեւի» պատկերը եւ Լերմօնտովի արձանը։ Երեկոյեան անտառոր լուսաւորութիւն էր. անթիւ լապտերներն ու ճրագները, խառնվելով էլէքտրական լոյսի հետ, դիւթական պատկեր էին ներկայացնում. թատրոնում այդ երեկոյին տրվում էր «Դէմօն»

---

13) Աբուլ լեռը Ախալքալաքից
14) Ամառնային պավիլիոնը Գօրելովկայում
15) Արագածը Ալէքսանդրօպոլի դաշտից
16) Ալէքսանդրոպոլը հայոց գերեզմանոցից
17) Արարատը Արամղալուի մօտից
18) Մեծ Արարատը Սարդար-Բուլախի բարձրից
19) Մեր քիւրդ բեռնակիրները Արարատի վրա
20) Ակոռի, մեծ պատառուածքը Արալբխից
21) Ակոռի, մեծ պատառուածքի ներքնակողմը
22) Երեւանը եւ Արարատը հիւսիսից
23) Երեւան. Սարդարի քէօշքի ներսը
24) Էջմիածին. Մեծ բակը եւ Մայր-եկեղեցին
25) Կաթողիկոսի օծման հանդէսը
26) Էջմիածին. Մայր-Տաճարի ներսը
27) » ս. Հռիփսիմէն դրսից
28) » ս. Գայանէն դրսից
29) » Շողակաթը դրսից
30) Թալին. Աւերակ եկեղեցու տեսքը հարաւում
31) Անի քաղաքի պարիսպները եւ դարպասը դրսից արեւելակողմում
32) Անի. մայր-եկեղեցին հարաւից
33) » Բատուցը մայր-եկեղեցու արեւելեան պատում
34) Անի. մայր-եկեղեցու խորանը
35) » ս. Գրիգորի եկեղեցին արեւմուտքից
36) Անի. ս. Գրիգոր եկեղեցու հիւսիս. պատը
37) » ս. Գրիգոր եկեղեցու սիւնազարդ սրահի մանրամասնութիւնները
38) Անի. Մզկիթը եւ Մինարէն
39) » Միջնաբերդի մօտի մատուռի մուտքի մանրամասնութիւնը
40) Անի. ս. Գրիգորի մատուռը արեւելքից
41) » ս. Գրիգորի մատուռի մուտքը
42) » ս. Գրիգորի մատուռի ներսը
43) » ս. Փրկչի մատուռը
44) » Ամրոցի մուտքը
45) » ս. Առաքելոց եկեղեցու դուռը արեւմուտքից
46) Անի. ս. Առաքելոց եկեղեցու արեւելեան երեսը
47) Խօշավանք. կամարաղարդ մուտքը
48) » Կամարամուտի արտաքին երեսը եւ եկեղեցին հարաւային-արեւմուտքից
49) Խօշավանք, Սինօդի դահլիճը
50) Կաղզուանի ձորի տեսարանը
51) Աղրի-Դաղի կողը կամ յենարանը
52) Անցք Աղրի-Դաղի վրայից

Իսկ ամբողջ երեսի ծաւալից պակաս մեծութիւն ունեցող փորագիր պատկերները հետեւեալն են.

1) Սեւ ծովի մուտքը Բոսֆորից
2) Հաջի Սօֆիայի ներսը. Տրապիզոն
3) Ռիոնի գետափը Քութայիսի բարձունքում
4) Ճանապարհ անտառում
5) Վրացիներ
6) Իվան Գուլյամջիբաշօֆ (Ախլցխայի պրիստաւ)
7) Մի խումբ գիւղացիներ Խերդվիսում
8) Վարձիայի վարդապետն ու սարկաւագը
9) Արփա-Զայի ակունքը
10) Բիւզանդական պատկեր
11) Հարսանիքի քէյֆը Ալէքսանդրօպոլում
12) Մարմաշէնի եկեղեցին հարաւ-արեւմուտքից
13) Արագածը Ապարանի ջրի ակունքից
14) Արարատը՝ Արալբխը առջեւում
15) Մեր «Կավալկադը» Արարատի գլխին.
16) Մեր օթեւանումը Սարդար-Բուլաղում
17) Փոքր Արարատը Սարդար-Բուլաղի մօտից
18) Արարատի կատարը հարաւային արեւելքից հանված, 13000 ոտք բարձր տեղից
19) Ապառաժները Ակոռիի մօտ.
20) Արարատը՝ Երեւանի մի տան գլխից
21) Արագածը՝ Երեւանի մի տան գլխից
22) Երեւան. Գէօք ջամիի մուտքը
23) » Գէօք ջամիի բակը եւ աւազանը
24) » Գէօք ջամին
25) Էջմիածին. ուխտաւորների բակը (Ղազարապատ)
26) Կաթողիկոս Մկրտիչ Խրիմեան
27) Էջմիածնի լիճը
28) Արարատը Էջմիածնի լճից (լճի տեսարանով միատեղ)
29) Հայ կրօնուհի
30) Մայր Տաճարի Դրան մուտքը
31) Եպիսկոպոսական գաւազաններ
32) Քանդակազարդ խաչքար
33) Թալին գիւղը Բուգուրու սարի հետ միասին
34) Թալինի աւերակ եկեղեցու զարդաքանդակները հիւսիսային կողմից
35) Թաթար խանը Թալինում
36) Թալինի պրիստաւը
37) Թալինի քահանան
38) Աղջաղալայի Թաթար
39) Արագածը դաշտերից. Արեւմուտք
40) Ցոյն աղջիկ Սուքօթանում
41) Անի. խորաքանդակ մեծ դրան ներքնապատի վրա
42) Անի, Զարդաքանդակներ
43) » Պարսպեալ պարապութիւն եւ մատուռ
44) » Շէնք Միջնաբերդում
45) » Քառակուսի Սիւն Միջնաբերդի շէնքում
46) » Դաշտային տեսարանը այդ շէնքի հարաւակողմի ծայրից
47) » Ամրոցը
48) Խօշավանք. Մենաստան՝ արեւելեան կողմը
49) » Մատուռը Արփա-Զայի հեղեղատի վրա
50) Կարսի միջնաբերդը
51) Վլադիկարսի մալական ստարշինա
52) Տուն Նօվո-Միխայլովկայում
53) Աղրի Դաղը Արաքսի գետաձորից
54) Արաքսի գետաձորի հիւսիսակողմի գահավէժը կազմող ցից ապառաժները
55) Արաքսը Կաղզվանի մօտ
56) Ղարա-վանքը Աղրի Դաղի վրա
57) Հայկական սարահարթի քարտէզը

Առաջին հատորի քարտէզների եւ պլանների թիւը եօթն է։

1) Տրապիզօնի հին ամրութիւնների յատակագիծը
2) Տրապիզօն եւ շրջակայք
3) Էջմիածնի վանքի եւ եկեղեցիների յատակագիծը
4) Աւերակ Անի քաղաքի յատակագիծը
5) Կարս եւ շրջակայք
6) Ասիայի յօրինուածական դիրքը
7) Հայաստան եւ յարակից երկիրներ (մէկ արշին եւ ինն վերշոկ երկայնութեամբ եւ մօտ մի արշին լայնութեամբ)։

օպէրան։ Դրսում, բաց բեմի վրա, ածում էր 51 հոգուց բաղկացած սիմֆոնիական նուագախումբը, իսկ թատրոնի մօտ նուագում էր թերեքեան կազակների խումբը։ Ժողովրդի այդքան բազմութիւն երբէք չէր տեսնված կուրզալում։ Դեռ առաւօտեանից թատրոնի բոլոր տոմսակները ծախված էին։ Գիշերը հրախաղութիւն եղաւ։ Անտրակտների ժամանակ դրսում անկարելի էր շարժվել բազմութեան շատութիւնից։ Կատարվեցին նաեւ մի քանի բանախօսութիւններ։ Օրվայ եղանակը լաւ էր, ուստի տօնախմբութիւնը շատ աջող անցաւ»։

—

ՆՈՐ-ԲԱՑԱԶԷՏԻՑ մեզ գրում են. «Ահա երկու շաբաթ է, որ անասունների ժանտախտը կրկին յայտնվել է մեր գաւառում։ Այժմ նա բոյն է դրել Սօլոկանների Սէմեոնովկա գիւղում եւ, չը նայելով անասնաբոյժերի ջանքերին, չէ վերջանում։ Գիւղը գտնվում է Թիֆլիս տանող ճանապարհի վրա եւ «քրէհ» բերող սայլապանները զգալի վնասներ են տեսնում, զրկվելով գնալ-գալուց—կարանտինի պատճառով։ «Քրէհը» խոշոր չափով բարձրացել է, հասնելով մինչեւ 40 կ. պուդին։ Կանգ է առել նոյնպէս գիւղի խանութպանի առուտուրը, որը այս ժամանակ գլխաւորապէս լինում է պանրով.—արգելված է պանրի, բրդի, կաշու թէ արտահանումը եւ թէ ներմուծումը։ Սարեկող խաշնարածները այժմ իրանց հօտերի արդիւնքը տանում են Դիլիջան գիւղը։ Ինչ ասել կուզէ, որ ամենից շատ վնասվում են գիւղացիները, որոնց անասունները, կովերը, եզները եւ հորթերը, անխնայ կերպով կոտորվում են։ Թէեւ սէրութիւնը հոգում է դրամական վարձատրութեամբ փոխարինել զրկանքը, վճարելով—գիւղացիների միջից ընտրված հաւատարմատարների գնահատութեան համեմատ—սպանված անասունների արժէքը, սակայն կորուստը անփոխարինելի է։ Նախ՝ նոյն իսկ առ ձեռն փողով նոր անասուններ ձեռք բերելը շատ դժուար է, յետոյ՝ գաւառումը ոչ մի ուրիշ տեղ չէ կարելի ճարել Սեմեոնովկայի անասունների նմանը, որոնց սերունդը եւ ցեղը հռչակված է իր խոշորութեամբ։ Կովերը տալիս են ամեն անգամ կթելիս մի-մի դոյլ կաթ եւ գնահատվում են 40—50 ր. եզները՝ 70—90 ր. եւ աւելի։ Միանգամայն հասկանալի է ամբողջ գիւղի ցաւը եւ ափսոսանքը, երբ մի որ եւ իցէ անասուն՝ վարակված արդէն վատավախան ախտով՝ տանում են սպանելու։ Կանանցից շատերը լաց են լինում։ Մի բան լաւ է, բոլորը հասկանում են այլ կերպ վարվելու անկարելիութիւնը եւ հաւատում, որ ցաւը վարակիչ է։ Կասկածաւոր անասունի համար իրանք տէրերն են նախօրօք յայտնում. մէկ նրա համար, որ միւս անասուններն էլ չը հիւանդանան, եւ մէկ էլ, որ կարողանան ստանալ հիւանդի սպանման դէպքում նրա գինը, որովհետեւ՝ թէ ծածկեն՝ ոչինչ չեն ստանայ։ Այսպիսով յոյս կայ, որ ցաւը շուտով վերջացած կը լինի»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՑԻՑ

—

Բերլին, յունիսի 18-ին

Էժան հաղորդակցութեան թօնամիները

Իւրաքանչիւր երկրի թէ տնտեսական եւ թէ նոյն իսկ կուլտուրական առաջադիմութիւնը կարելի է չափել նրա հաղորդակցութեան միջոցների վիճակով։ Որքան յարմար ու էժան են այդ միջոցները, նոյնքան էլ զարգացած են լինում երկրի տնտեսական կեանքն ու կուլտուրան. որքան բազմաթիւ են երկաթուղիները, ջրանցքները, պօստային ու հեռագրական հիմնարկութիւնները, նոյնքան էլ բարձր է լինում քաղաքակրթութեան ընդհանուր մակերեւոյթը։

Իբրեւ ապացոյց, բաւական է վերցնել աշխարհի հինգ մասերը։ Դրանց քաղաքակրթութեան աստիճանին համապատասխանում է պօստային հիմնարկութիւնների քանակութեան եւ գործունէութեան աստիճանը։ Այսպէս 1900 թ. եղել են՝

1) Եւրոպայում	116,683	պօստ. հիմնարկ.
2) Ամերիկայում	91։633	» »
3) Ասիայում	18,217	» »
4) Աւստրալիայում	7,133	» »
5) Աֆրիկայում	2,162	» »

Դրանից աւելի պերճախօս է այդ հիմնարկութիւնների միջոցով ուղարկված գրութիւնների քանակը, Այսպէս, նոյն 1900 թ. ընթացքում զանազան հասցէներով ուղարկվել են՝

1) Եւրոպայում	15,589,800,000	գրութիւն
2) Ամերիկայում	12,449,900,000	»
3) Ասիայում	1,081,900,000	»
4) Աւստրալիայում	326,100,000	»
5) Աֆրիկայում	99,300,000	»

Նոյնանման վիճակագրական տեղեկութիւններ կարելի էր բերել եւ հաղորդակցութեան միւս միջոցների մասին եւ առանձին երկիրների վերաբերմամբ, բայց կարծում ենք, աւելորդ է, որովհետեւ միայն վերոյիշեալով էլ հարցը պարզ է։

Եթէ հաղորդակցութեան միջոցները նպաստում են երկրի տնտեսական ու կուլտուրական կեանքի զարգացմանը, եթէ որոշ չափով նրանցից է կախված ժողովրդի քաղաքակրթութիւնը, ուրեմն պէտք էր կարծել, որ ոչ ոք չէ կարող հակառակվել այդ միջոցների բարձրացմանն ու հեշտութեանը։

Սակայն այդպէս չէ դառն իրականութիւնը։ Այստեղ, Գերմանիայում, կան մարդիկ, կայ մի ամբողջ դասակարգ, որը սիստեմատիկաբար հակառակ է գործում։

Այդ դասակարգը «իւնկէրներն» են, որոնք ամենայն ջանք ու եռանդով աշխատում են հաղորդակցութեան միջոցները դժուարացնել-թանգացնել, որպէս զի չքաւոր ժողովուրդը, բանւոր դասակարգը, շատ չը ճանապարհորդէ, հեշտութեամբ տեղից տեղ չը գաղթէ եւ դրանով օրավարձը բարձրանալուն չը նպաստէ։

Վերջերս հրատարակված վիճակագրական տեղեկութիւններից երեւում է, որ 1899 թ-ին Պրուսիայում ընդամենը 553,932,123 երկաթուղային ճանապարհորդութիւն է կատարվել։ Եթէ այդ թիւը համեմատենք ազգաբնակութեան թւի հետ, այն ժամանակ կը տեսնենք, որ իւրաքանչիւր բնակչին գալիս է ընդամենը 15 ճանապարհորդութիւն, ամեն մէկը 1/2 ժամ տեւողութեամբ։

Տրամվայի (էլէքտրական եւ ձիով) երթեւեկութիւնն էլ այնքան յաճախ ու բազմամարդ է լինում, որ միայն Բերլինում վարչութիւնն ստանում է մինչեւ թւով օրական 64,450 մարկ եկամուտ։

Այդ բոլորը դուր չէ գալիս «իւնկէրներին» եւ նրանք աշխատում են «չարիքի» առաջն առնել...

Դեռ 1897 թ. դրանց ներկայացուցիչներից մէկը, կոմս Կանից, պահանջեց երկաթուղիների տոմսակները թանգացնել եւ դրանով արգելք դառնալ հեշտ ու էժան ճանապարհորդութեան... Երբ անցեալ ձմեռ պատգամաւոր Միւլլեր նոյն ուղղութեամբ խօսեց ռեյխստագում, իւնկերական մամուլը մեծ հաւանութեամբ արտատպեց նրա ճառը եւ միացաւ այն պահանջին, թէ պէտք է վերացնել էժան գները, որպէս զի մարդիկ յաճախ չը ճանապարհորդեն»...

Այժմ էլ նոյն մամուլը ահագին հարայ-հրոց է բարձրացրել այն առիթով, որ հաղորդակցութիւնների մինիստրութիւնը որոշել է գնալ-գալու տոմսակների տեւողական իրաւունքը վաւերական համարել մինչեւ 40-րորդ օրը։

Այդպիսով իւրաքանչիւր տեղացի կարող է էժան գնով «գնալ-գալու» տոմսակ վերցնել, ուղեւորվել մօտակայ քաղաքը, մի ամսից աւելի աշխատել եւ ապա վերադառնալ։

Իսկ իւնկերները հակառակ են այդ բանին։ Ինչու. որովհետեւ նրանց ձեռնտու չէ բանւորական հոսանքը դէպի կենտրոնները, որովհետեւ դա կը նպաստէ գիւղատնտեսական բանւորների օրավարձի բարձրանալուն եւ հետեւապէս կը վնասէ կալուածատէր իւնկէրներին...

Ե. Թ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«С. П. Вѣд.» լրագրին գրում են Կ. Գօլսից. «Երիտասարդ-Թիւրքերի գործունէութիւնը եւ նկատելի շարժումը հայկական կոմիտէների մէջ, ինչպէս երեւում է, հանգիստ չեն տալիս չափազանց կասկածոտ սուլթանին։ Մօտ օրերումս արտաքսման կուղեւորվի չերքէզ Դամադ-Ֆէրիդ փաշան, որ ամուսնացած է սուլթանի երկրորդ քրոջ հետ։ Թէպէտ եւ Իլդիզ-Կիօսկում առ երեսս ուզում են ցոյց տալ, թէ ոչ մի նշանակութիւն չեն տալիս այդ ուղեւորութեանը, այսուամենայնիւ անկասկած է, որ Աբդիւլ-Համիդ, ուղարկելով Եւրոպա իր փեսային, ի նկատի ունի իր միւս, «մոլորված» փեսա Դամադ-Մահմուդ փաշային, որի վրա եւ ուզում է ներգործել առաջինի միջոցով։ Եւ յիրաւի, Դամադ-Մահմուդ փաշան իզուր չէ վատնում իր ժամանակը հայրենիքից դուրս։ Բացի բազմաթիւ լրագրական յօդուածներից եւ բրոշիւրներից, որոնք բոլորն էլ ուղղված են թիւրքական այժմեան կառավարութեան եւ առանձնապէս սուլթանի դէմ, Մահմուդ փաշայի նախաձեռնութեամբ նորերումս Եգիպտոսում սկսել է հրատարակվել մի նոր լրագիր, որի ամեն մի համարը սկսվում է Ղուրանի յայտնի եւ լաւագոյն հատուածով,—«Իննեալ Մոյմինունա Իհվատիւն» (միաստուածութեան հաւատացողները բոլորն էլ եղբայրներ են)։ Այս լրագրի նպատակն է միացնել երիտասարդ-թիւրքերի եւ հայկական կոմիտէների գործողութիւնները, որպէս զի թիւրք կառավարութեան երկու կատաղի թշնամիները կարողանան գործել միասին»։

—«Deutsche Warte» հաւատացնում է, որ Բաղդադի երկաթուղու նախագիծը շուտով կը ներկայացվի սուլթանի վերջնական հաստատութեանը, որը, երեւի, շուտով էլ տեղի կունենայ։ Գերմանական լրագիրը այս տեղեկութեան հետ միասին հաղորդում է, որ ռուս դրամատէրերի մասնակցութիւնը Բաղդադի երկաթուղու շինութեան մէջ չէ հաստատվում, այնպէս որ երկաթուղին կը շինվի միայն գերմանացիների եւ ֆրանսացիների դրամով։ «Hamburger Nachrichten» լրագիրը, խօսելով նոյն երկաթուղու շինութեան մասին, առանձնապէս շեշտում է, որ Բաղդադի երկաթուղին լուրջ մրցող կը հանդիսանայ երկաթուղային այն գծի դէմ, որ ռուս կառավարութիւնը մտադիր է անցկացնել Ռուսաստանից դէպի Պարսից ծոցը, թէպէտեւ, աւելացնում է լրագիրը, ճիշդ տեղեկութիւններ ունեցող շրջաններում կարծում են, որ ռուսական նախագիծը աւելի շուտ կիրագործվի, քան ֆրանս-գերմանական ձեռնարկութիւնը։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

19 յուլիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Հրատարակված են Բարձրագոյն հրամաններ,—1) Ոսկու եւ նաւթի մասնաւոր արդիւնագործութեան արգելման մասին Պրիմորսկայեա շրջանի ծովափերում եւ նրա մօտ գտնվող կղզիների վրա, 2) այս կարգադրութիւնը իրագործելու ժամանակի եւ եղանակի մասին։

ՍԱՐԱՏՕՎ։ Այրվեց «Առեւտրական նաւարկութեան» ապրանքների պահեստը ապրանքների հետ միասին։

Կ. ՊՕԼԻՍ։ Սկօպիայի սերբական գլխաւոր հիւպատոսին ուղղած պօստային ծրարները մաքսային իշխանութիւնների կողմից բռնելու գործի վերաբերմամբ արտաքին գործերի մինիստրը հրամանագրեց վերադարձնել բռնածը՝ սերբական դեսպան Գրուիչի ստորագրութեամբ։

«Armenia»-ի երկրորդ հատորը բաղկանում է 512 երեսներից, իսկ մեծ պատկերները միասին առնելով 606 երեսներից եւ ամբողջապէս նուիրված է Թուրքաց Հայաստանի արեւելեան բաժնին. այն է Տրապիզոնի, Էրզրումի, Վանի եւ Բիթլիսի նահանգներին։ Կազմված է 24 գլուխներից եւ 2 յաւելուածներից հետեւեալ պարունակութեամբ.

I. Էջք Թրքական հողի վրա
II. Դէպի Վանի լիճը
III. Վանի լճի մի ծայրից միւսը
IV. Վան
V. Վանից Բիթլիս
VI. Բիթլիս
VII. Բիթլիսից Մուշ. Մուշ
VIII. Մուշից Էրզրում
IX. Էրզրում
X. Վերադարձ դէպի սահմանագլուխ
XI. Երկրորդ այցելութիւն Հայաստանի
XII. Կենտրօնական սարահարթի մէջտեղից դէպի Խնուս
XIII. Խնուսից Թութախ
XIV. Մուրատ գետի ափով դէպի Մելազկերտ
XV. Մելազկերտից Ախլաթ
XVI. Ախլաթ
XVII. Մեր օթեւանումը Ներբովթի լեռան հրաբերանում
XVIII. Ներբովթի շուրջը, Նազուկ լճի մօտով
XIX. Վերելք Սիփանի
XX. Վերադարձ դէպի կենտրօնական Սարահարթը
XXI. Մեր օթեւանումը Բինգեօլի վրա
XXII. Դէպի հայրենիք
XXIII. Աշխարհագրական
XXIV. Վիճակագրական եւ քաղաքական

Ցաւելուած I. Հայոց ազգային Սահմանադրութիւնը Թիւրքիոյ կայսրութեան մէջ. յաւելուած II. 1) Հայաստանի լճերի քիմիական կազմութիւնը, 2) Մատենագրութիւն, 3) Ցանկ նիւթերի (բացատրութիւն եւ ստուգաբանութիւն անունների)։

Մեծ պատկերները հետեւեալներն են՝

1) Վանի լիճը Սիփանի հետ՝ Արտամետից քաշված
2) Ալաշկերտի դաշտը՝ Աղրի-Դաղի ստորոտից
3) Քիւրդ-Համիդիէ հեծելազօրքի մի խումբ
4) Ղարափափախ Համիդիէ հեծելազօրքի մի խումբ
5) Քիւսէհ Դաղը՝ Ալաշկերտի դաշտից
6) Քօչքի Եուսուֆ բէյը
7) Քօչքցի քիւրդ տօնական հագուստով
8) Սիփանը՝ Պատնոցի դաշտից
9) Վան՝ Վարագ լեռան ստորոտից
10) » Ուլու-Ջամիի ներսը
11) » Ուլու-Ջամիի քանդակը
12) » Մհերի դռան բեւեռագիր արձանագրութիւնը
13) Վարագ լեռը՝ Թոփրաք-Ղալէի բարձունքից
14) Աղթամար. եկեղեցին հարաւային արեւելքից
15) Աղթամար. եկեղեցին հիւսիսային արեւմուտքից
16) Եկեղեցին Աղթամարում, զարդաքանդակները արեւմտեան պատի վրա
17) Ներբովթի հրաբերանը՝ ինչպէս որ երեւում է Գարձիքից, Բիթլիսի ճանապարհից
18) Բիթլիսը՝ Ավիլ Մէյդանից
19) Գրգուռ լեռը հարաւից. Գրգուռի հրաբերանի հեռանկարը
20) Մուշի դաշտի քիւրդ աղջիկ
21) Բարեկեցիկ խասքեօյցի, Մուշի դաշտ
21) Ս. Կարապետի վանքը հարաւից
23) Ս. Կարապետ. եկեղեցին հարաւ-արեւմուտքից
24) Հարաւի տեսարանը ս. Կարապետի դարատափից
25) Երկու մատուռները ս. Կարապետում
26) Աք-Դաղը եւ Խնուսի դաշտը հարաւից
27) Կենտրօնական սարահարթը. Բինգեօլը հեռուում, Կուլիի մօտից քաշված
28) Կարղաբազար. Բասենի դաշտի մի ծայրից միւսը, կենտրօնական սարահարթի հարաւակողմի սահմանից քաշված
29) Էրզրումը՝ անգլիական հիւպատոսարանի կուռից. Միջնաբերդը միջին հեռաւորութեան վրա եւ Էվերլի Դաղի հեռանկարը
30) Էրզրում. Զիֆթէ Մինարէն
31) Կոփ կիրճի մօտից տեսարանը դէպի հարաւ եւ հարաւ-արեւելք
32) Կալայեկի ամրոցը. Վերին Խարշուտ
33) Սումեղասի վանքը
34) Թէքման եւ Բինգեօլ լեռները Խդոնունի մօտից
35) Խամուրը Ալի Մուրի եւ Խնուսի միջեւ գտնվող կիրճից
36) Մելազկերտը հիւսիսից, Սիփանի հեռանկարը
37) Ախլաթ. իքի Կուբբէ (Ղալայի, կամ Թրքական քաղաքից հեռանկարը)
38) Ախլաթ. մեկուսացեալ դամբարանը
39) Ախլաթ. Խարաբա-քաղաքը
40) Ներբովթի հրաբերանը Ղըզվաղի սարանդից
41) Սիփան. գագաթնային սահմանների տեսարանը՝ արեւմտակողմի կատարից քաշված.
42) Համիդիէ հեծելազօրքը Գիւզիւմում
43) Գունդէմիր հայ գիւղը եւ Բինգեօլի գահաւանդի հեռանկարը
44) Բինգեօլի գահաւանդները Բինգեօլ Սուի ակունքի հետ՝ Զաղլիք գիւղից քաշված.
45) Բինգեօլի հրաբերանը. ծովակը՝ Կարակալի խարակների մէջից քաշված.
46) Տեսարանը Բինգեօլի արեւմտակողմի կատարից } կէս արշին մեծութեամբ
47) Բինգեօլի բոլոր կատարների պանորաման } կէս արշին մեծութեամբ

Զանց եմ առնում առաջ բերելու մնացած 42 պատկերների ցանկը, այսքանը արդէն կարող է որոշ հասկացողութիւն տալ նկարների տեսակի եւ նպատակի մասին.

Իսկ քարտէզները եւ յատակագծերը հետեւեալներն են.

1) Ցատակագիծ Վանի
2) Բիթլիս եւ շրջակայք
3) Մելազկերտի հին ամրութիւնների յատակագիծը
4) Ախլատի յատակագիծը
5) Ներբովթի հրաբերանի ներսը
6) Ներբովթ եւ շրջակայք
7) Սիփանի գագաթնային սահմանների յատակագիծը
8) Բինգեօլ-Դաղը՝ հիւսիսում
9) Բինգեօլ-Դաղը՝ հարաւում։

Ցաջորդական յօդուածներով կը ներկայացնեմ «Մշակի» ընթերցողներին անգլիական մամուլի կարծիքը այս մեծ գրքի պատմական, ցեղագրական ու աշխարհագրական արժէքի նկատմամբ։

Ց. Տօնապետեանց

ԼՕՐԷՆՑՕ-ՄԱՐԿԵԶԻ։ Բօէրական մի զօրաբաժին երկու թնդանօթներով անցաւ պօրտուգալական սահմանը եւ բանակ դրեց Գուանէկուա։ Այնտեղ արդէն գտնվում են պօրտուգալական 500 զինուորներ, իսկ թնդանօթներ ուղարկված են այսօր։ Պատրաստվել են ճանապարհ ընկնելու էլի 300 հոգի, եթէ բօէրները անձնատուր չը լինեն։

20 յուլիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Թագաւոր Կայսրը բարեհաճեց Բարձրագոյն հրամայել թոյլ տալ ամարային շրջան հագնելու բոլոր մասնաւոր քաղաքային եւ արտաքոյ քաղաքի գտնվող թատրոններում, այգիներում եւ զբօսատեղերում։— Յուլիսի 21-ին Բարձրագոյն ներկայութեամբ Բալտեան նաւաշինութեան գործարանում տեղի կունենայ «Կայսր Ալէքսանդր III» զրահակրի ջուր իջեցնելը։

ԱՍՏՐԱԽԱՆ։ Հիւրանոցի սենեակում գազանաբար կտրատված է մի պարսիկ. հարեւան սենեակներում ապանութիւնը չեն լսել. ապանող պարսիկը բռնված է. պատճառը համարում են խանդոտութիւնը դէպի այն աղջիկը, որ նշանված էր սպանվածի հետ։

ԲԱԹՈՒՄ։ Քաղաքի ազգաբնակութիւնը հանդարտվեց եւ քաղաքը ընդունեց իր սովորական կերպարանքը։ Ինչպէս պարզվեց պաշտօնական քննութիւնից, պայթումի ուժով քանդված են բերդի 8 կազեմատներ եւ սաստիկ վնասված են երկու երկաթեայ ծածկոյթներ եւ ցէյխհաուզի ու ռազմամթերք պահելու շինութիւնները։ Այն կազեմատներում, ուր տեղի ունեցաւ պայթումը, բացի ականներից, կար նաեւ 17 պուդ վառօդ։ Սպանվածները մօտ 30 են, վիրաւորվածները մօտ 60։ Մասնաւոր տների վնասվածքները լուրջ չեն. զինուորական եւ քաղաքային հիւանդանոցներում գտնվող վիրաւորեալները առանձին հոգացողութիւն են վայելում։

ԼՕՆԴՕՆ։ Համայնքների ժողովի Պատերազմական փոխառութեան վերաբերեալ վիճաբանութիւնների ընթացքում Հիկս Բիչ յայտնեց, թէ, ինչպէս ինքը կարծում է, պարլամենտից պատերազմական նպատակների համար նշանակված գումարները բաւական կը լինեն գոնէ մինչեւ յունվար ամիսը եւ նոյն իսկ կարելի է, եթէ ասեն բան լաւ գնայ, մինչեւ ֆինանսական տարվայ վերջը։ Ժողովը ապա ընդունեց մի առաջարկութիւն, որով լիազօրութիւն է տալիս կառավարութեան գործադրել 6,157,000 ֆ. ս. ծովային կառուցումների համար։—Լօրդերի ժողովը ընդունեց լօրդ Բօբէրտսին 100,000 ֆ. ստերլինգ տալու առաջարկը։ Սալիսբիւրի եւ Սպէնսէր գովաբանում էին ֆէլդմարշալին։ Բոզբէրիի առաջարկութիւնը՝ յանձնել գահակալութեան արքայական դէկլարացիան առանձին մասնաժողովի, երկրորդ անգամ քննելու համար, մերժված է։—Ուրիշ լրացումներ օրէնքի վերաբերմամբ չառաջարկվեցին եւ Թագաւորի տիտղոսի օրինագիծը ընդունվեց երրորդ ընթերցանութիւնից յետոյ։

ԼՕՆԴՕՆ։ Կիպչներ հեռագրում է Պրէտորիայից։ «Յուլիսի 15-ին օֆիցէրներից բաղկացած մի պահակախումբ, 20 իսմարիներ եւ մի քանի հոգի տեղացի հրացանաձիգներից վազում էին երկու սայլի ետեւից, որոնց մէջ կային մի քանի բօէրներ. հալածելով նրանց, նրանք 15 մղոն հեռացան երկաթուղու գծից Դօրնբիվէրի մօտ, Օրանժեան հանրապետութեան մէջ, եւ այստեղ նրանց ճանապարհը կտրեցին 200 բօէրներ։ Երկարատեւ ինքնապաշտպանութիւնից յետոյ մի փոքրիկ շինութեան մէջ, նրանք անձնատուր եղան, երբ նրանց փամփուշտները սպառվեցին։ Վիրաւորված են երեք իսմանրիներ։ Անձնատուր լինելուց յետոյ՝ բօէրները ստիպեցին տեղացի հրացանաձիգներին ձեռները բարձրացնել եւ հրացանազարկ արին նրանց։ Վիրաւորված իսմանրիներից մէկն եւս հրացանազարկ արվեց, իսկ մնացածներին ազատութիւն տուին։ Իսմանրիին հրացանազարկ անելը բօէրները բացատրեցին նրանով, որ ընդունեցին նրան Կապի գաղթականի տեղ։— Ֆրէնչ հաղորդում է, թէ ստացել Կրոյցինգերից մի նամակ, որի մէջ նա յայտնում է, թէ ժտադիր է հրացանազարկ անել այն բոլոր տեղացիներին, որոնք ծառայում են անգլիացիներին, եթէ նրանք ընկնեն իր ձեռքը, լինեն նրանք զինաւորված թէ առանց զէնքի—մի եւ նոյն է։ Վերջին ժամանակ ընդհանրապէս Կապի գաղթականութեան տեղացիներին հրացանի բռնելու շատ դէպքեր են տեղի ունեցել։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀՐԱՒԷՐ

Այսու յարգոյարար երրորդ անգամ հրաւիրվում են Թիֆլիսի ս. Նշան եկեղեցու բարեպաշտ ծխականները յիշեալ եկեղեցին, ամսիս 22-ին, առաջիկայ կիրակի օրը, 12 ժամին, երեցփոխի 1900 թուականի եկեղեցու հաշուեմատեանը քննելու։

Գործակալ ա. մ. եկ. հ. Թիֆլիսի՝
Զաքարիա քահ. Զարդեղեան
1—1

ԱՏԱՄՆԱԲՈՅԾ

(Зубной врачъ)

Օր. Շ. ՏԷՐ-ՆԻԿՈՂԱՅՈՍԵԱՆ

Ընդունում է հիւանդներին ամենայն օր՝
Առաւօտեան 9—2 ժ.
Երեկոյեան 5—7 ժ.
Հասցէն՝ Սուրբ-Նշան եկեղեցու գաւթում։
1—2

ԼԻՆԵԼՈՎ ՀՄՈՒՏ

հայոց հին եւ նոր լեզուների եւ պատմութեան, ցանկանում եմ ուսուցչութեան պաշտօն ընտանէնել Թաւրիզի կամ Թէհրանի հայոց ուսումնարաններում։

Դիմել՝ Въ конторѣ Хачатурянца, Амайаку Кариманяну. 1—5

Կ. Մ. ԿԷՕՆՃԵԱՆ

Ընդունում է բերանի եւ ատամների հիւանդութիւններ ունեցողներին։ Շինում է արուեստական ատամներ, քիթ, քիմք (обтураторъ) եւ վերին ու ստորին անդամահատված ծնոտների պրոթեզներ (резекціонные протезы).

Առաւօտեան 8—2 ժամ.
Երեկոյեան 5—8 »
Հասցէն՝ Պուշկինսկայա փողոց, № 16։
1—25

ՎԱՐԺՈՒՀԻ

Մանկական պարտէզի համար հրաւիրում է Թաւրիզի Ատրպատականի Հայուհեաց Բարեգործական ընկերութեան վարչութիւնը։ Դիմել բժշկապետ Բ. Նաւասարդեանին, ժամի 11—12-ը։ 5—5

Մամուլի տակ է եւ մինչեւ սեպտեմբերի վերջը լոյս կը տեսնի

Վ. ՓԱՓԱԶԵԱՆԻ

„ԷՄՄԱ“

վէպը, 350—400 մեծադիր երես.

Վաղօրօք բաժանորդ գրվողների համար ճանապարհածախսով 1 րուբլի։ Լոյս տեսնելուց յետոյ կը լինի ճանապարհածախսով—1 ր. 25 կոպ. Բաժանորդ կարելի է գրվել—Բագումում պ. Ս. Օհանջանեանի մօտ, Магазинъ бывшій А. П. Петросянъ. կամ՝ պ. Ի. Մէլիքեանի մօտ—Фотографія «Рембрандтъ», Торговая, Բալախանիում—պ. Իշխան Միրզաբէկեանի մօտ՝ А. Меликовъ и К°. Բիբի-Էյբաթում—պ. Արշ. Տէր-Յովհաննիսեանի մօտ, Бр. Набатовы и К°, Շուշում—պ. Ղազար Տէր-Ղազարեանի մօտ։ Թիֆլիսում—պ. Արշակ Մեհրաբեանի մօտ, «Տարազ» շաբաթաթերթի խմբագրատանը։
3—3

ԵՐԿՈՒ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ

ՈՐՈՆՈՒՄ ԵՆ ՊԱՇՏՕՆ

Մէկը՝ ուսուցչի, թեմական դպրոց աւարտած, ցենզաւոր, փորձված, կարող է լինել նա եւ խմբապետ։

Միւսը, զանձապահի կամ հաշուապահի օգնականի, հարկ եղած դէպքում կը ներկայանայի գրաւական։ Հարցնել Գուտենբերգի խանութում։ 3—3

Ալէքսանդրապոլում
ՍՏԵՓԱՆԵԱՆԻ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ
վաճառվում են.

ՆՈՐ ԴԱՍԱԳԻՐՔ. «Մայրենի լեզու» առաջին տարի, Յովհ. Արաբաջեանի, բազմաթիւ մաքուր պատկերներով, գինն է 30 կոպ.։

Տիկ. Տիրուհի եւ պ. Յ. Կոստանեանցների բոլոր աշխատութիւնները։

Գումարով գնողներին սովորական զիջումն։

Դիմել՝ Александрополь. Книгопродавцу Степанянцъ. 4—5

ԹԻՖԼԻՍԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ԴԻՐԵԿՏՕՐԻ ՊԱՇՏՕՆԱԿԱՏԱՐԸ

հաղորդում է ի գիտութիւն ընդհանուրի, թէ աշակերտների ընդունելութիւնը նախապատրաստական դասարանի ստորին բաժանմունքը եւ նոր բացվող միջին բաժանմունքը նշանակված է այս 1901—1902 ուսումնական տարվայ օգոստոսի 28-ին եւ 31-ին։ Ստորին բաժանմունքը ընդունվում են տղաներ 7-ից մինչեւ 9 տարեկան հասակում առանց քննութեան, միջին բաժանմունքը—8-ից մինչեւ 10 տարեկան՝ քննութեամբ։ Խնդիրներ ընդունվում են երկուշաբթի, չորեքշաբթի եւ շաբաթ օրերը, ցերեկվայ ժամի 11-ից մինչեւ 1-ը, ուսումնարանի ջինութեան մէջ։ Խնդրի հետ միասին պէտք ներկայացնել՝ մետրիկական վկայականի իսկականը, վկայականներ՝ կոչման, ծաղկի պատուաստման մասին կամ նրանց պատճէնները։ Խնդրագիրները առանց վերոյիշեալ դօկումենտների չեն ընդունվի։
(9, 11, 13, 16, 21) 5—5

Ի. ԵԱ. ԲՐՕՆ-ՖՕՆ-ԲՐԷՆՆԷՐԻ ՀԱՇԻԱՊԱՀԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻՑ

Նիկոլաեվսկայա, № 88.

Խնդիրքների ընդունելութիւնն սկված է։ Պարապմունքների սկիզբը սեպտեմբերի 10-ին։ Դասընթացքը բաժանված է կիսամեակների։ Պարապմունքները տեղի են ունենում ճաշից յետոյ։ Վճարը ամբողջ դասընթացքի համար 60 րուբլի։ Ընդունվում են երկու սեռի անձինք։

ԱՌԱՐԿԱՆԵՐԸ ԵՒ ԴԱՍԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ.

1) Հաշուապահութիւն
2) Բանկային գործ
3) Առեւտրական թուաբանութիւն
4) Թուաբանութիւն հաշուեցոյցով։
} Ի. Եա. Բրօն-ֆօն-ԲրէնՆէր, դասարանների հիմնադիրը.
5) Տեխնոլոգիա
6) Ապրանքագիտութիւն
7) Թղթակցութիւն.
} Մ. Ի. Զէնգէրի, լեռնային ինժենէր, պետական խորհրդական.
8) Առեւտրական օրէնքներ
9) Առեւտուր
} Վ. Ս. Մօսկալեօվ, պրօկուրօրի օգնական, թ. ն. դ.
10) Գեղագրութիւն—Գ. Եա. Դիւկով, ինժենէր-երկրաչափ.

Ոչ-պարտադիր առարկաներ

1) Ֆրանսիական լեզու—Է. Կ. Լիոզէկ, դաս. 2-դ կլասիկ. գիմնազիայի.
2) Գերմանական լեզու—Իւ. Ֆ. Գրուպիկ, դաս. Թիֆլ. բէալական ուսումնարանի.
3) Սղագրութիւն, Ի. Եա. Բրօն-ֆօն-ԲրէնՆէր.
4) Ուսուցումն գրելու գրող մեքենայով, նաեւ կողմնակի անձանց համար։

Մինչեւ օգոստոսի 10-ը խնդիրքները ընդունվում են դասարանների հիմնադրի մօտ՝ նրա բնակարանում, Միխայլովսկի պրոսպէկտ, № 71, իսկ յետոյ դասարանների դիւանատանը, Նիկոլաեվսկայա, № 88. 3—20

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿԻՑ ԴՈՒՐՍ ԵԿԱՆ

1) «ՎՏԱԿ» հանդէսը, որ արժէ Թիֆլիսում 1 ր. 50 կ., քաղաքից դուրս 2 ր.։ Յատկապէս այս հանդէսի համար պատրաստվում են չքեղ եւ հաստատ կազմեր 40 կ., 50 կ., 75 կ. եւ 1 ր.։ 2) Վրթանէս Փափազեանի «ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ» գրքոյկը, որ Թիֆլիսում արժէ 50 կ., քաղաքից դուրս 65 կ.։—Յիշեալ երկու գիրքը ի վաճառ կը հանվեն գրաքննիչից իրաւունք ստանալուց յետոյ, մօտաւորապէս յուլիսի վերջին։ 3) Աչրդ Ջիւանիի «Քեարամ եւ Ասլիի» հէքիաթը, գ. 60 կ., քաղաքից դուրս 80 կ.։ Գումարով գնողներին զիջումն կը լինի։ «Վտակի» համար բաժանորդագրութիւնը կենտրոնական գրավաճառանոցում շարունակվում է։

Դիմել՝ Тифлисъ. Центральная Книжная Торговля. 3—10

ՀԱՇՈՒԱՊԱՀՈՒԹԵԱՆ դասընթացքի XII շրջան
ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

Հեղինակ «Զեռնարկի առեւտրական և գործարանական հաշուապահութեան»

ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է

Երկու սեռի անձանց՝ 4 ամսվայ ընթացքում հաշուապահութիւն գործնականապէս, եբաշխաւորելով, և եղած դէպքերում յանձն է առնում պաշտօնի առաջարկել։

ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ

Ա.) Կրկնակի իտալական հաշուապահութիւն ըստ ամենայն առեւտրական ճիւղերի, հանդերձ նաւթային արդիւնաբերական և կերօսինի գործարանական հաշուետուութեան։
Բ) Առեւտրական թուաբանութիւն։
Գ) Առեւտրական նամակագրութիւն։
Դ) Առեւտրական եւ մուրհակների կանոնադրութիւն։
Ե) Գեղագրութիւն և ամենավատ ձեռքերի ուղղելը։

Պարապմունքները սկսվելու են 1901 թուի սեպտեմբերի 15-ից, ճաշից յետոյ, և պարբերաբար շարունակվելու են իւրաքանչիւր ՁՈՐՍ ամսից յետոյ։

ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ԿՈՒՐՍԻ ՎՃԱՐՆ Է 60 ՐՈՒԲԼԻ

Ցանկացողները թող դիմեն դրատուր կամ անձամբ 3 ժամից մինչև 6 ժամ երեկոյեան, ԿՈՒԿԻԱ, Նիկոլաեվսկայա փողոց, սեփական տուն, № 46։ (Николаевская ул. № 46)։

Վերոյիշեալ հաշուապահութեան ձեռնարկը ծախվում է ԹԻՖԼԻՍՈՒՄ, հեղինակի մօտ, և Ռուսաստանի բոլոր յայտնի գրավաճառանոցներում։ ԳԻՆՆ Է 3 ր. 50 կոպէկ։ Օտարաքաղաքացիները գիրքը գտնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պոստի ծախս վճարելու։ 9—25

ԳՈՒՏՏԷՆԲԷՐԳ ԳՐԱԽԱՆՈՒԹՈՒՄ

վաճառվում են

ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ, բժ. Վ. Արծրունու . . . . . 75 կ.
ՎԱՏ ՅԱՒ » » » . . . . . 6 »

Շուտով լոյս կը տեսնի «Մի ԽՄԻՐ», երկրորդ տպագրութիւն։

Դիմել՝ Тифлисъ. Книжный магазинъ «Гуттенбергъ», Г. Галустяну. 6—10

Ֆինանսների մինիստրի թոյլտուութեամբ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

(Баку, Прачешная, домъ Теръ-Ованесова)

Կուրսերի նպատակն է տալ ունկնդիրներին ժամանակակից-առեւտրական կրթութիւն եւ պատրաստել հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են ատենատուներ։ Կուրսերում աւանդվում են՝ 1) Առեւտրական թուաբանութիւն եւ թուաբանութիւն համրիչի վրա. 2) Հաշուապահութիւն՝ արդիւնաբերական-գործարանական, առեւտրական եւ բանկային. 3) Առեւտրական թղթակցութիւն. 4) Առեւտրական տնտեսագիտութիւն. 5) Առեւտրական եւ մուրհակային օրէնքներ. 6) Գեղագրութիւն եւ արագագրութիւն (ուղղումն ձեռագրի)։

Ընդունելութիւնը՝ սեպտեմբերի 1-ից ամեն օր՝ կուրսերում եւ Եղբ. Յովհաննեան եւ ընկ. ԲԱԳՈՒԻ բաժանմունքում։ Կուրսերի կանոնադրութիւնը (уставъ) եւ մանրամասն ծրագիրը—տրվում եւ ուղարկվում են ձրիաբար։ Օտարաքաղաքացիները դիմում են՝ БАКУ, учредителю коммерческихъ курсовъ А. И. Теръ-Каспарову. (Ե. չ.) 8—25

Дозволено цензурою, Тифлисъ, 20 Іюля 1901 г.
Электропечатня Грузин. Изд. Т—ва, Б.-Ванкская ул.